859 Տէր, Դու իմ հզոր պահապանն ես, ես ումի՞ց պիտի վախենամ,

1. Տէր, Դու իմ հզոր պահապանն ես, ես ումի՞ց պիտի վախենամ,
Տէր, Դու իմ կյանքի ապավենն ես, ես ումի՞ց պիտի դողամ:
Տէր, Դու ինձ հետ ես ցերեկ ու գիշեր
Ինչպես բարեգութ, սիրասուն Հայր,
Դժվարության մեջ օգնականն ես իմ,
Տկարիս համար ամուր ասպար:

2. Տէր, Դու իմ հզոր պահապանն ես, ես ումի՞ց պիտի վախենամ,
Տէր, Դու իմ կյանքի ապավենն ես, ես ումի՞ց պիտի դողամ:
Իմ կյանքը Քոնն է, ապրի՛ր Դու իմ մեջ
Եվ ինձ նվաճի՛ր Քո սիրով անբիծ,
Իմ սրտում վառի՛ր սուրբ հուրդ անշեջ,
Որ ապրեմ հավերժ կյանքով բերկրալից:

3. Տէր, Դու իմ հզոր պահապանն ես, ես ումի՞ց պիտի վախենամ,
Տէր, Դու իմ կյանքի ապավենն ես, ես ումի՞ց պիտի դողամ:
Ողորմի՛ր Դու ինձ, չարից պահիր զերծ
Անցավոր կյանքիս այս օրերում,
Եվ հագցրու Դու ինձ ճերմակ հանդերձ,
Որ հոգիս ցնծա հավերժիդ գրկում: